Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)	**ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (6ՃՏՊ005)**
ECTS կրեդիտ	1 կրեդիտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի. *(գիտելիք և իմացություն)* • ճանաչել հայ ժողովրդի պատմության զարգացման ընթացքը 1914-ից մինչև մեր օրերը, • ներկայացնել հայկական հարցի, հայոց ցեղասպանության միջազգային արծարծումների, արցախյան հիմնախնդրի շեշտադրումները: *(կարողություններ)* • վերլուծել, համեմատել, համադրել պատմական կարևոր իրադարձությունները, երևույթները՝ հին ժամանակներից մինչև մեր օրերը, • լուսաբանել ժամանակի մարտահրավերները, • կողմնորոշվել արդի աշխարհում քաղաքական վայրիվերումների մեջ:
Դասընթացի թեմատիկ ծրագիր	• Առաջին համաշխարհային պատերազմը և հայոց ցեղասպանությունը: • Փետրվարյան և հոկտեմբերյան հեղափոխությունները և դրանց արձագանքը Անդրկովկասում և Հայաստանում: • Բրեստի հաշտությունը, Սարդարապատի ճակատամարտը, Բաթումի պայմանագիրը, ՀՀ սեղմումը: • Փարիզի կոնֆերանսը, Սևրի պայմանագիրը, հայ-թուրքական պատերազմը (1920թ.): • Անհատի պաշտամունքը և դրա հետևանքները Հայաստանում: • Երկրորդ համաշխարհային պատերազմը և հայերի մասնակցությունը: Պանթուրքիզմը: • Զանգվածային հայրենադարձությունը: • Արցախյան շարժում, Հայաստանի III Հանրապետությունը:
Դասընթացի գրականության ցանկ	• Կիրակոսյան Ջ.Ս. Երիտթուրքերը պատմության դատի առաջ, Երևան, 1969թ. (ռուս.), 492 էջ: • Հայոց պատմություն (դասագիրք ԲՈՒՀ-ի համար), խմբ. Սիմոնյան Հ.Ռ., Երևան, 2012թ., 872 էջ: • Հայոց քաղաքական պատմություն դասընթացի հիմնահարցերի համառոտ կոնսպեկտ, Կազմեցին՝ Իսահակյան Հ.Ա, Կարապետյան Ա., Իգիթյան Լ., Երևան, 2007թ., 52 էջ:

	• Մելքոնյան Ա. Հայոց պատմություն, Երևան, 1998թ., 276 էջ: • Պարսամյան Վ.Ա., Հարությունյան Շ.Ռ. Հայ ժողովրդի պատմություն (1801-1978թթ.), Երևան, 1979թ., 739 էջ:

Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)	**ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ** **(6ԷԻԿ001)**
ECTS կրեդիտ	1 կրեդիտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի. *(գիտելիք և իմացություն)* • ներկայացնել աշխարհի առաջացումը և լինելիությու- նը, • պարզաբանել Աստծո գոյության հիմնախնդիրը, • բացատրել ճանաչողության հնարավորությունը, գիտական գիտելիքի հիմնավորումը և մեթոդաբանությունը, • քննարկել բարոյական վարքագիծը և կանոնները, մարդու էությունը, • մեկնաբանել կյանքի իմաստը, ազատությունը, օտարումը և այլ հիմնախնդիրներ, • մեկնաբանել նշված հիմնախնդիրների լուծումների ճանապարհները, • ներկայացնել հիմնավորման փաստարկներ ու հակա- փաստարկներ: *(կարողություններ)* • կատարել եզրահանգումներ տեսությունների լավ կամ վատ աշխատանքի վերաբերյալ, • համադրել տեսակետների համոզիչ, հիմնավորված և արդյունավետ կողմերը, • առաջադրել հիմնախնդիրներ և ձևակերպել դրանցից բխող համապատասխան հարցեր, • քննարկել առաջադրված հարցերի լուծման տարբերակ- ները, • վերլուծել քննարկվող հարցի շուրջ վիճող տարբեր տե- սությունները, • բացահայտել տարբեր տեսությունների խոցելի տեղերը, այ- սինքն՝ հակափաստարկները:

Դասընթացի թեմատիկ ծրագիր	• Փիլիսոփայության տեսությունը: Փիլիսոփայության հիմնական երեք բնագավառները: • Սուբստանցիայի հիմնախնդիրը: Սուբստանցիա հասկացության սահմանումը: • Աստծո գոյության հիմնախնդիրը: Թեիզմ, դեիզմ, աթեիզմ և պանթեիզմ: • Նախասահմանվածության հիմնախնդիրները: • Ժամանակի և տարածության հիմնախնդիրը: • Մարդկային ճանաչողության բնույթը: Զգայական և բանական ճանաչողություն: • Գիտելիքի հնարավորության հիմնահարցը: • Էմպիրիզմ, ապրիորիզմ, դոգմատիզմ, ագնոցիտիզմ և ֆալիբիլիզմ: • Բարոյական համընդհանուր կանոնի հնարավորության հիմնահարցը: • Ազատության և օտարման հիմնահարցը: • Տեխնածին քաղաքակրթության համպարփակ հիմնախնդիրները: Էկոլոգիական փիլիսոփայություն:
Դասընթացի գրականության ցանկ	• Հովհաննեսյան Թ.Ա. Տեխնիկայի փիլիսոփայություն, Երևան, 2007, 115 էջ: • Հովհաննեսյան Թ.Ա. Տեխնիկայի փիլիսոփայական անդրադարձ, Երևան, 2010, 167 էջ: • Հովհաննեսյան Թ.Ա., Խաչատրյան Լ.Գ Մարդկային ռեսուրսների կառավարում, Երևան, 2013, 387 էջ: • Հակոբյան Ս. Փիլիսոփայության դասընթաց, Երևան, 2007: • Абраамян Л.А. Лекции по филоссофии, Ереван, 1996.

Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)	**ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹ (6ՀՕԼ002)**
ECTS կրեդիտ	2 կրեդիտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի. *(գիտելիք և իմացություն)* • տարբերակել տերմինը հասկացությունից և բառից, • բացատրել և տարբերակել խոսքի արժանիքներն ու թերությունները, • մեկնաբանել պատրաստի խոսքերի առանձնահատկու-թյունները, • ներկայացնել բանավեճում հաղթելու ուղիները: *(կարողություններ)* • օգտագործել տերմիններ շինարարական, տնտեսա-գիտական, ճարտարապետական և այլ մասնագիտական տեքստերում, • գտնել լեզվառճական սխալները գրավոր և բանավոր խոսքում, վերափոխել դրանք ճիշտ ձևերով, • օգտագործել պատրաստի խոսքեր, • բանավիճել որևէ հարցադրման շուրջ՝ կիրառելով բանա-վեճի արվեստի մասին տեսական գիտելիքները:
Դասընթացի թեմատիկ ծրագիր	• Տերմինագիտություն (բառ, հասկացություն տերմին): • Ցուցումներ գիտական աշխատանքներ գրելու վերաբերյալ: • Խոսքի մշակույթ: • Պատրաստի խոսքեր: • Բանավեճի արվեստ:
Դասընթացի գրականության ցանկ	• Ավետիսյան Յու., Զաքարյան Հ. Հնչյունաբանություն (ուղղախոսություն, ուղղագրություն), Եր., 2007թ.: • Գաբրիելյան Վ. Գրավոր խոսք, Եր., 2012թ.: • Գալստյան Հ. Ճիշտը և սխալը, Եր., 2007թ.: • Իմ մայրենին (հայոց լեզվի գործնական վարժությունների օժանդակ ձեռնարկ ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի ուսանողների համար), Եր., 2003թ.: • “Հայոց լեզու”, Ծրագիր, մեթոդական ցուցումներ, ստուգողական աշխատանքներ հեռակա ուսուցման ուսանողների համար, ձեռնարկ, ԵՃՇՊՀ., 2008թ.: • Միրզոյան Լ. Կյանքի ուղեցույց, Եր., 2013թ.:

Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)	**ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ (6ՀՕԼ004)**
ECTS	2 կրեդիտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի. *(գիտելիք և իմացություն)* • ներկայացնել գիտական տեքստի առանձնահատկու- • թյունները և կառուցվածքը, • ճանաչել դերբայական դարձվածները, • թվարկել որոշիչի արտահայտման միջոցները: *(կարողություններ)* • կառուցել գրագետ, տրամաբանված խոսք՝ օգտագործելով դերբայական դարձվածներ, • կազմել կրավորական սեռով նախադասություններ, • օգտագործել մասնագիտական տերմինները շինարա- • րական, մեքենաշինական, գեոդեզիական և այլ մասնա- • գիտական երևույթների նկարագրման գործընթացում, • գտնել ուղիղ և անուղղակի խնդիրները, ժամանակի, տեղի, ձևի, պայմանի, նպատակի և պատճառի պարագաները նախադասության մեջ:
Դասընթացի թեմատիկ ծրագիր	• Определения распространенные и нераспространенные. • Выражение согласованного определения прилагательными, местоимениями, порядковыми числительными, причастиями. • Определения, выраженные существительными и словосочета- • ниями. Употребление существительных с предлогами и без предлогов. • Причастия. Способы образования причастий. Причастные обороты. Обособление причастных оборотов. • Деепричастие. Употребление деепричастий и деепричастных оборотов, их отношение к действию, выраженному сказуемым. • Объект действия. Выражение объекта действия. Прямой и косвенный объект. • Активная и пассивная формы предложения. • Обстоятельства места, времени, цели, причины, следствия, условия, уступки. Выражение обстоятельств наречием, существительным, деепричастием, инфинитивом.
Դասընթացի գրականության ցանկ	• Арутюнян Л.И. и др. Русский язык, учебник для вузов, Ереван, 2003г. • Мадоян В.В. Русский язык. Учебное пособие для неязыковых вузов, Ереван, 2002г.

	• Мадоян В.В., Петросян Е.Б. Русский язык для неязыковых вузов, Ереван, 2006г. • Назинян В.А. Русский язык для студентов строительных факультетов, Ереван, 2006г. • Русский язык для строительных специальностей, Москва, 1989г.

Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)	**ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՈՒ (6ՀՕԼ005)**
ECTS կրեդիտ	2 կրեդիտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի. *(գիտելիք և իմացություն)* • վերհիշել անգլերենի հնչյունները և երկհնչյունները, • ճանաչել ներկա անորոշ և ներկա շարունակական ժամանակները, • ներկայացնել ներկա անորոշ և ներկա շարունակական ժամանակների կազմությունն ու գործածության կանոնները, • բացատրել a/an/the հոդերի գործածությունը հաշվելի և անհաշվելի գոյականների հետ, • ներկայացնել անցյալ անորոշ ժամանակաձևի կազմությունը և գործածության կանոնները, • անգիր ասել անկանոն բայերի երեք հիմքերը, • բացատրել գոյականների հոգնակի թվի կազմությունը, • բացատրել անգլերեն նախադասության ուղիղ և շրջուն շարադասության տարբերությունները, • ճանաչել և կիրառել գոյականի ստացական հոլովը, • ճանաչել դերանվան տեսակները տարբերակել ներկա վաղակատար և վաղակատար շարունակական ժամանակները, • մեկնաբանել ներկա վաղակատար և վաղակատար շարունակական ժամանակների գործածության կանոնները, • բացատրել ածականի համեմատական և գերադրական աստիճանների կազմությունը, • տարբերակել ներկա վաղակատար ժամանակաձևի կիրառումն անցյալ անորոշ ժամանակաձևից, • խոնարհել There is, There are դարձվածքները ներկա, • անցյալ և ապառնի անորոշ ժամանակներով, • ճանաչել տեղացույց, ժամանակացույց, ուղղություն և այլ հարաբերություններ արտահայտող նախդիրները: *(կարողություններ)* • խոսել առօրյա թեմաներով՝ ընտանիք, ուսում, ապագա մասնագիտություն և այլն, • թարգմանել տեքստեր հայերենից անգլերեն և հակառակը՝ գրավոր և բանավոր,

	• կազմել նախադասություններ կրավորական սեռով • կատարել ինքնուրույն գրավոր աշխատանք՝ գործածելով տրված բայերի համապատասխան ձևերը, • կազմել տարբեր տեսակի հարցեր, • կիրառել There is,There are դարձվածքները թարգմանությունների մեջ:
Դասընթացի թեմատիկ ծրագիր	• Անորոշ և շարունակական ժամանակների կազմությունն ու գործածության կանոնները: • Անորոշ և որոշյալ հոդերի գործածությունը: • Գոյականի թիվը: • Անգլերեն նախադասության շարադասությունը: • Գոյականի հոլովը, թիվը, դասակարգումը և ֆունկցիաները: • Դերանվան տեսակները: • Ներկա վաղակատար և վաղակատար շարունակական ժամանակների կազմությունը և գործածությունը: • Ածականի համեմատական և գերադրական աստիճանների կազմությունը:
Դասընթացի գրականության ցանկ	• Մամելյան Ե., Սուջյան Զ., Ալեքսանյան Օ., Եղյան Ա., Պողոսյան Ն., Անգլերենի ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Երևան, 2016: • Առաքելյան Ռ.Ա. Ուսումնաօժանդակ տեքստեր ճարտարապետությունից /անգլերեն լեզվով/, Երևան, 1988: • Պողոսյան Ն., Մասնագիտական բառանյութի ընտրության և մեթոդական տիպականացման սկզբունքները (անգլերեն ճարտարապետաշինարարական նյութի հիման վրա), Երևան, 012: • Бонк Н. А., Котий Г. А., Н.А.Лукьянова, Учебник английского языка, Москва, ДЕКОНТ - ГИС, 1998. • Синявская Е.В., Улановская Э.С., Пособие по английскому языку для II курса инженерно-строительных и автодорожных вузов, Москва, Высшая школа, 1981.

Դասընթացի անվանումը (կրթամոդուլի անվանումը)	**ԳԾԱԳՐԱԿԱՆ ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԾԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ՀԱՏՈՒԿ ԿՈՒՐՍ) (6ԳՀԳ002)**
ECTS կրեդիտ	3 կրեդիտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի իրականացման արդյունքում սովորողն ունակ կլինի. *(գիտելիք և իմացություն)* • ներկայացնել հեռանկարի կառուցման համար կենտրոնական պրոյեկտման մեթոդի էությունը և կատարման ընթացքը, գծային հեռանկարի հիմունքները, • նկարագրել հեռանկարի ապարատի էությունը, • ներկայացնել օբյեկտների և սխեմատիկ կառույցների հեռանկարների կառուցման ընթացքը, • ներկայացնել դիզայն մտահղացումները հեռանկարում: *(կարողություններ)* • կիրառել ավանդական և ժամանակակից տեխնոլոգիաները դիզայն նախագծերում հեռանկարի կառուցման ժամանակ, • ստեղծել նկարագրվող օբյեկտների հեռանկարներ (գծագրեր), • պատրաստել գեղագիտական ցուցանմուշներ՝ գեղարվեստական կերպարի նկարագրման նպատակով (ստենդ, պլանշետ, մակետ և այլն):
Դասընթացի թեմատիկ ծրագիր	• Հեռանկարի ապարատ, նրա տարրերը: • Հեռանկարի կառուցման ժամանակակից մեթոդները: • Ստվերների կառուցումը հեռանկարում: • Հայելային անդրադարձումը հեռանկարում:
Դասընթացի գրականության ցանկ	• Սողոմոնյան Կ.Հ., Ճարտարագիտական գրաֆիկա, Երևան, 1997թ.: • Գորդոն Վ.Օ. և Սեմենցով-Օգիեվսկի Մ.Ա., Գծագրական երկրաչափության դասընթաց, Երևան, 1962թ.: • Короев Ю.И., Начертательная геометрия, Москва, 1987г. • Табеев В.А., От живописи к проективной геометрии, Киев, 1988г. • Четверухин Н.Ф., Левицкий В.С. Начертательная геометрия, Москва, 1963г.

Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)	**ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (6ՃՏՊ002)**
ECTS կրեդիտ	3 կրեդիտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի. *(գիտելիք և իմացություն)* • նկարագրել համաշխարհային ճարտարապետության ոճերը և ուղղությունները, • ներկայացնել ճարտարապետության հռչակավոր վարպետ-ների ստեղծագործությունները: *(կարողություններ)* • գնահատել տարբեր ժամանակաշրջանների համաշխարհային ճարտարապետության առանձնահատկությունները, • համադրել ճարտարապետական ստեղծագործություններն ըստ տիպերի, տեսակների, ձեռագրերի, ուղղությունների, ստեղծագործողների:
Դասընթացի թեմատիկ ծրագիր	• Միջագետքի հնագույն պետությունների ճարտարապետու-թյունը: Հին Եգիպտոսի ճարտարապետությունը: • Հին Հունաստանի ճարտարապետությունը: • Հին Հռոմի ճարտարապետությունը: • Արևմտյան Եվրոպայի վաղմիջնադարյան ճարտարապե-տությունը: Ռոմանական ժամանակաշրջան: • Արևմտյան Եվրոպայի գոթական ճարտարապետությունը: • Արևմտյան Եվրոպայի վերածննդի ճարտարապետությունը: • Բարոկոյի ճարտարապետությունը: • 18-րդ դար: Կլասիցիզմի ճարտարապետությունը: Ամպիր: Էկլեկտիկա: • Մոդեռնի ճարտարապետությունը: • Պոստմոդեռնը, դեկոնստրուկտիվիզմը, մինիմալիզմը, հայթեքը ճարտարապետության մեջ: • Էկոճարտարապետություն:
Դասընթացի գրականության ցանկ	• Всемирная история архитектуры, М., Издательство академии архитектуры СССР, М., ЭКСМО, 1949. • Гидион З., Пространство, время, архитектура, М., Стройиздат, 1984. • Забалуева Т.Р., История архитектуры и строительной техники, М., ЭКСМО, 2007.

Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)	**ԳԾԱՆԿԱՐ (6ԳԳՔ002)**
ECTS կրեդիտ	2 կրեդիտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի. *(գիտելիք և իմացություն)* • *պարզաբանել* գրչածայրի և տուշի օգտագործման եղանակ-ները, • *բացատրել և նկարագրել* մարդու (բնորդ) մարմնի կառուց-վածքը, համաչափությունները, ոսկրային համակարգը, • *ներկայացնել* ինտերիերի՝ հեռանկարում ճշգրիտ կառուց-ման, պատկերման և մշակման մեթոդները: *(կարողություններ)* • *փորձարկել* տուշի օգտագործման հնարավորությունները համապատասխան թղթի վրա, • *գործնականում իրականացնել* մարդու մարմնի պատկերու-մը, • *կիրառել* ինտերիերի, հեռանկարի և կրճատումների վերա-բերյալ կատարած ուսումնասիրությունները:
Դասընթացի թեմատիկ ծրագիր	• Գիպսե գլուխ • Նատյուրմորտ գրչածայրով • Ինտերիերի փոքր հատված • Բնորդ
Դասընթացի գրականության ցանկ	• Аксенов Ю., Левидова М., Цвет и линия, М. Советский художник, 1976г. • Ростовцев Н., Учебный рисунок, М., Просвещение,1976г. • Школа изобразительного искусства, Выпуск III, М.,1965г.

Դասընթացի անվանումը (կրթամոդուլի անվանումը)	**ԿՈՄՊՈԶԻՑԻԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ (6ԴԻԶ005)**
ECTS կրեդիտ	3 կրեդիտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի ավարտին սովորողն ունակ կլինի. *(գիտելիք և իմացություն)* • բացահայտել նախագծման և դեկորատիվ ձևավորման հնարքները, • արտահայտել ծավալի և ծավալագոյացման խնդիրները, • կազմել պատկերացում տարածության մասին: *(կարողություններ)* • կիրառել կոմպոզիցիոն էլեմենտները տարածության մեջ և զարգացնել տարածական պատկերացում, • ստեղծել կոմպոզիցիա (գեղարվեստական ստեղծագործության կառուցվածք, որի հիմնական տարրերի դասավորվածությունը պետք է կազմակերպվի որոշակի համակարգով և հերթականությամբ)՝ օգտագործելով ներդաշնակության օրինաչափությունները, ձևի օբյեկտիվ հատկություններն ու գեղարվեստական միջոցները, • ստեղծել ծավալներ և լուծել կոմպոզիցիոն խնդիրներ՝ ծավալային էլեմենտների կիրառմամբ:
Դասընթացի թեմատիկ ծրագիր	• Մեկ էլեմենտով ծավալային կոմպոզիցիայի ստեղծում (պարզ և բարդ մոդուլ): • Մասնատված երկրաչափական ձևերի էլեմենտներով կոմպոզիցիաների մշակում (սիմետրիկ և ասիմետրիկ): • Հանման և ավելացման մեթոդով ձևափոխված մարմիններով կոմպոզիցիաների ստեղծում: • Ռելիեֆի և կոնտրռելիեֆի ստացումը: • Մարմինների ստեղծումը բջջային, ձողային և պանելային մեթոդներով: • Կոմպոզիցիաների կատարում ստեղծված մարմինների կիրառությամբ: • Տարածության կազմակերպումը երկրաչափական մարմինների մասնատման եղանակով: • Տարածության կազմակերպումը ուղղաձիգ, հորիզոնական և թեք էլեմենտներով: • Տարածության կազմակերպումը կցված, վերադրված և տարանջատված էլեմենտներով: • Փակ, կիսափակ և բաց տարածություններ:
Դասընթացի գրականության ցանկ	• Писаренко Т.А., Ставнистый Н.Н. Основы дизайна, Издательство Дальневосточный государственный университет, 113с., 2005г.

	• Степанов А.В., В.И. Мальгин., Г.И. Иванов, др. Объемно-пространственная композиция, М., Издательство Архитектура-С, 2007г. • Чернышев О.В. Формальная композиция, Творческий практикум по основам дизайна, Минск, Харвест, 355с., 1999г. • Устин В.Б. Учебник дизайна, Композиция, методика, практика, М., АСТ, 256 с., 2009 г.

Դասընթացի անվանումը (կրթամոդուլի անվանումը)	**ՏԻՊՈԳՐԱՖԻԿԱ ԵՎ ՇՐԻՖՏ (6ԴԻԶ2009)**
ECTS կրեդիտ	2 կրեդիտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի ավարտին սովորողն ունակ կլինի. *(գիտելիք և իմացություն)* • արտահայտել տարբեր երևույթներ, առարկաներ միայն տառերով, • վերարտադրել տառային լոգոներ, • ճանաչել տառի գեղարվեստական և գրաֆիկական մշակման ձևերը, • սահմանել սեփական տառատեսակի հիմքերը և ստեղծել բոլոր տառերը, • ներկայացնել տառային կոմպոզիցիաներ: *(կարողություններ)* • գտնել միայն տառով արտահայտելու տարբեր երևույթներ, առարկաներ, • կատարել տառային լոգոներ, • մշակել տառի գեղարվեստական և գրաֆիկական ձևեր, • գործնականում իրականացնել սեփական տառատեսակի հիմքերը և ստեղծել բոլոր տառերը, • ստեղծել տառային կոմպոզիցիաներ:
Դասընթացի թեմատիկ ծրագիր	• Արտահայտել տառային գրվածքով տարբեր տրամադրություններ: • Տառի գեղարվեստական մշակման 6 տարբերակ: • Տառային եռյակ - անվանատառերի համադրման 6 տարբերակ: • Երկրորդ առաջադրանքից ընտրված տարբերակից ստեղծել այբուբենի բոլոր տառերը: • Միայն տառատեսակի գրվածքով արտահայտել հայտնի գրական ստեղծագործության բնույթը - դրամա, կատակերգություն, տեխնիկական գրականություն: • Միայն տառատեսակի գրվածքով արտահայտել հայտնի երաժշտական ստեղծագործության բնույթը (աֆիշա): • Ստեղծել տառային կոմպոզիցիա:
Դասընթացի Գրականության ցանկ	• Աֆրիկյան Ֆ.Գ. Տառարվեստ, Սովետական գրող հրատ., Երևան, 1984, 139 էջ: • Գործակալյան Հ.Ն. Հայկական Տառատեսակներ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1972, 107 էջ: • Տիրատուրյան Կ.Թ. Հայոց Գիրը, Հայպետհրատ, Երևան, 1963, 143 էջ: • Гордон Ю. Книга про буквы от А до Я, Издательство студии Артемия Лебедева, 2006, 384с. • Чихольд Ян Образцы шрифтов, Издательство студии Артемия Лебедева, 2012, 248с.

Դասընթացի անվանումը (կրթամոդուլի անվանումը)	**ԷՍՔԻԶԱՎՈՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱ (6ԻԷԴ006)**
ECTS կրեդիտ	2 կրեդիտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի ավարտին սովորողն ունակ կլինի. *(գիտելիք և իմացություն)* • ձևակերպել առաջնային մտքերը էսքիզավորման տեխնիկայի միջոցով, • ներկայացնել էսքիզավորման տեխնիկայի հիմունքները, • թվարկել պարզագույն երկրաչափական մարմինները: *(կարողություններ)* • ցույց տալ առարկաները երկրաչափական ձևերով, • կատարել էսքիզներ երկրաչափական մարմիններով, • գծել պարզ առարկաները հեռանկարի մեջ:
Դասընթացի թեմատիկ ծրագիր	• Էսքիզավորման տեխնիկայի հիմունքներ: • Պարզագույն երկրաչափական մարմիններ: • Առարկաների վերլուծությունը պարզագույն երկրաչափական մարմիններով:
Դասընթացի գրականության ցանկ	• Магали Дегальго Янес, Домингез Эрнест Ремондо, Рисунок для индустриальных дизайнеров, Издательство, Арт-Родник, Серия: Рисунок для профессионалов, 2006 г. • Шайнбергер Ф., Альбом ваших идей, Учимся делать эскизы в дороге, 2012г. • Olofsson E.,Sjolen K., DesignSketching, 2005.

Դասընթացի անվանումը (կրթամոդուլի անվանումը)	**ԴԻԶԱՅՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ (6ԴԻԶ2015)**
ECTS կրեդիտ	4 կրեդիտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի իրականացման արդյունքում սովորողն ունակ կլինի. (գիտելիք և իմացություն) • արտահայտել վերացական երևույթներն ու մտքերը տեսողական մակարդակով, • ներկայացնել ստեղծագործական մոտեցում գրենական պի-տույքների համար նախատեսված դեկորատիվ-կիրառելի ծավալի նախագծման մեջ, • վերարտադրել նախագծված դեկորատիվ-կիրառելի օբյեկ-տի գրաֆիկական կերպարը և փաթեթավորումը: (կարողություններ) • արագ կողմնորոշվել գրաֆիկական կերպարի ստեղծման և փաթեթավորման գործում, • ստեղծել գրենական պիտույքների համար նախատեսված դեկորատիվ-կիրառելի ծավալի նախագիծ և գրաֆիկական կերպար:
Դասընթացի թեմատիկ ծրագիր	• Երկրաչափական մարմինների փոփոխման եղանակով ձևագոյացումների վարժանքներ և ֆունկցիոնալ իրի էսքիզային առաջարկ: • Գրչամանի նախագիծ: • Նախագծված գրչամանի գրաֆիկական կերպարի ստեղծում և փաթեթավորում:
Դասընթացի գրականության ցանկ	• Власов В. А. Японская промышленность, изд. Наука. Москва, 1979г. • Рунге В. Ф., Сеновский В. В. Основы теории и методологии дизайна, Москва, 2005г. • Джионс К. Д. Инженерное художественное конструиро-вание, современные методы проектного анализа, изд. Мир, Москва, 1976г. • Кавешникова Н. А. Дизайн, история и теория, Москва, 2006г.

Դասընթացի անվանումը (կրթամոդուլի անվանումը)	**ՄԱԿԵՏԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ ՆՅՈՒԹՈՎ (6ԴԻԶ2018)**
ECTS կրեդիտ	2 կրեդիտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի ավարտին սովորողն ունակ կլինի. *(գիտելիք և իմացություն)* • ներկայացնել թղթի և ստվարաթղթի ֆունկցիոնալ կիրառման հնարավորությունները, • մեկնաբանել երկրաչափական պարզ ձևերի մակետավորման սկզբունքները, • ցույց տալ թղթի և ստվարաթղթի կոնստրուկտիվ առանձնահատկությունների և ֆունկցիոնալ ծալվածքների գաղտնիքները, • ճանաչել մակետավորման պրոցեսում թղթի և ստվարաթղթի միաժամանակյա կիրառման հնարավորությունները, • ներկայացնել սոսնձող նյութերի մասին տեղեկություն և նրանց կիրառման առանձնահատկությունները: *(կարողություններ)* • իրականացնել երկրաչափական ձևաստեղծմամբ ծավալների մակետավորում թղթի և ստվարաթղթի օգտագործմամբ, • կատարել նյութերը համատեղելու և երկրաչափական պարզ ձևերի պատրաստման վարժանքներ, • գտնել մանրակերտի պարզ լուծումներ, • լուծել մասշտաբի, գույնի և ֆակտուրայի պահանջվող խնդիրներ:
Դասընթացի թեմատիկ ծրագիր	• Թղթից և ստվարաթղթից ձևափոխվող երկրաչափական պարզ ձևերի պատրաստման վարժանքներ: • Գրենական պիտույքների համար նախատեսված հարմարանքի մանրակերտ:
Դասընթացի գրականության ցանկ	• Вечоркевич В. Ремонт и благоустройство жилища, Варшава, Аркады, 1987г. • Власов Л.А. Японская промышленность, М., Наука, 1989г. • Кузнецов А.Н. Обслуживающий труд, М., 1986г.

Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը)	**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ (6ԳԳՔ015)** **(Գրաֆիկական դիզայն կրթական ծրագրի համար)**
ECTS կրեդիտ	1 կրեդիտ
Ուսումնառության վերջնարդյունքներ	Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի. *(գիտելիք և իմացություն)* • Ճիշտ վերարտադրել միջավայրի ծավալատարածական և հեռանկարային կառուցման հմտությունները: *(կարողություններ)* • Պրակտիկորեն օգտագործել նյութի տարբեր տեսակները:
Պրակտիկայի թեմատիկ ծրագիր	• Քաղաքային միջավայրի առանձնահատկությունները և պրակտիկ կիրառումը պլեների ժամանակ: • Ծանոթացում՝ Ալ. Թամանյանի և թամանյանական դպրոցի ներկայացուցիչների թողած ճարտարապետական ժառանգության հետ: